

**ՆԵՐԱԿԱՅՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ***

ՀՏԴ 811.19'366

DOI: 10.52063/25792652-2021.2-163

ՍԻՐԱՆՈՒԾ ԿԵՍՈՅԱՆ

ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kesoyan1996@mail.ru

Հոդվածի նպատակն է պարզաբանել այն, որ լեզվի ձևաբանական մակարդակի լիարժեք ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ներակայորեն արտահայտված կարգերի ուսումնասիրությունը: Մեր խնդիրն է վեր հանել և ներկայացնել ներակայման դրսևորումները արդի հայերենի ձևաբանական մակարդակում:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են վերլուծական ու համեմատական մեթոդները:

Յուրաքանչյուր ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ նշանակություն, սակայն առանձին դեպքերում իրացվելով խոսքում՝ կարող է արտահայտել նաև այլ նշանակություններ: Այլ կերպ ասած՝ մի ձևաբանական միավորը գործածվում է մեկ այլ միավորի նշանակությամբ, որը տվյալ դեպքում դիտվում է որպես ներակա: Ըստ այդմ, ձևաբանական մակարդակում կարելի է առանձնացնել ներակայման հետևյալ դրսևորումները՝ 1. ժամանակային իմաստի ներակայում, 2. եղանակային իմաստի ներակայում, 3. անդեմ ձևի կիրառությունը դիմավոր ձևի նշանակությամբ, 4. դիմային իմաստի ներակայում, 5. թվային իմաստի ներակայում, 6. հոլովական իմաստի ներակայում:

Առանձին դեպքերում հիմնական նշանակությունից բացի կարող են արտահայտվել նաև լրացուցիչ նշանակություններ (օրինակ՝ հետևանքի հարատևության նշանակությունը վաղակատար ժամանակաձևի դեպքում):

Հիմնաբառեր՝ ներակայում, «թաքնված» քերականություն, ժամանակային, եղանակային, դիմային, թվային, հոլովական իմաստների ներակայում, պատմական ներկա, բացարձակ անորոշ, կրո կամ բացասական ձև:

Լեզվի և մասնավորապես նրա քերականական մակարդակի ամբողջական քննությունը ենթադրում է անդրադարձ ինչպես արտակայորեն, այնպես էլ ներակայորեն արտահայտված միավորներին, քանի որ «որքան էլ սպառիչ և լիարժեք թվա որևէ լեզվի քերականական նկարագրությունը, այն, ըստ Էոլթյան, չի կարող ամբողջական լինել, քանի դեռ նրանում իրենց արտացոլումը չեն գտել լեզվի ոչ բացահայտ կարգերը և թաքնված քերականության մյուս տարրերը» (Кацнельсон 82): Յուրաքանչյուր քերականական, մասնավորապես ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ

* Հոդվածը ներկայացվել է 05.04.2021թ., գրախոսվել՝ 27.04.2021թ., տպագրության ընդունվել՝ 30.06.2021թ.:

Նշանակություն, սակայն առանձին դեպքերում պայմանավորված գործառույթամբ, այսինքն՝ խոսքում իրացվելով՝ կարող է ձեռք բերել բոլորովին այլ նշանակություններ: Դրանք, ինչպես ընդգծում է Ա. Բոնդարկոն, ոչ հասկացակարգային (կատեգորիական) նշանակություններ են, քանի որ բացի «իր սեփական» հասկացակարգային իմաստաբանական գործառույթներից ձևաբանական կարգը իր վրա է վերցնում լրացուցիչ իմաստաբանական ծանրաբեռնվածություն՝ կատարելով այնպիսի գործառույթներ, որոնք հատուկ են այլ կատեգորիաների (Бондарко 144: Հմմտ. «Եթե հաշվի առնվի, որ յուրաքանչյուր քերականությամբ ունի իր սեփական մշտական նշանակությունը, ապա յուրաքանչյուր նոր, դրան ոչ բնորոշ նշանակություն կհամարվի ներակա» (Барышева 39)): Այսինքն՝ տվյալ ձևաբանական միավորը կարող է ներակայել այլ ձևաբանական միավորներին հատուկ նշանակություններ: Դրանք կազմում են «թաթնված» քերականությունը, որը ներկայացնում է այնպիսի քերականական ազդանշաններ, որոնք ներակայորեն պարունակվում են շարահյուսական կապակցություններում և բառերի իմաստաբանության մեջ (Кацнельсон 78):

Հայերենում ներիմաստների արտահայտման բազմազանությամբ աչքի է ընկնում հատկապես բայական համակարգը: Ընդհանուր առմամբ հայերենի ձևաբանական մակարդակում կարելի է առանձնացնել իմաստային ներակայումների հետևյալ դեպքերը:

1. Ժամանակային իմաստի ներակայում: Բայական ամեն մի ժամանակաձև ունի իր ուրույն նշանակությունը: Այսպես՝ սահմանական եղանակի անկատար ներկան արտահայտում է խոսելու պահին կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն: Սա այն տարբերակիչ հատկանիշն է, որով սահմանական ներկան հակադրվում է մյուս ժամանակաձևերին: Սակայն սահմանական ներկայով կարող են արտահայտվել նաև կատարված ու կատարվելիք գործողություններ, որոնք դուրս են սահմանական ներկայի հասկացակարգային նշանակության սահմաններից: Առաջինը հայտնի է որպես պատմական ներկա, որը ներակայորեն արտահայտում է անցյալում կատարված գործողության նշանակություն, օրինակ՝ «Բայց ահա՛ **գալիս է** ամառը, և նա թագուհուն **ուղարկում է** Սյունյաց ամառանոցները, իսկ ինքը **գնում** Ուտիք, շաբաթներով **նստում** զբոսավայրում...» (Մ 82), «Ավարայրի ճակատամարտը **տեղի է ունենում** 451 թվականին Տղմուտ գետի ափին»: Նշված բայաձևերն ունեն ներկա ժամանակին հատուկ կազմություն, սակայն ցույց են տալիս անցյալում կատարված գործողություն: Անցյալ ժամանակի նշանակության ներակա արտահայտման այս միջոցը կիրառվում է հատկապես կատարված գործողությունները կենդանի ձևով ներկայացնելու, առանձին դեպքերում ամենակարևոր գործողությունները ավելի շեշտելու նպատակով: Այսպես, օրինակ, Սահակ Սևադա իշխանը Գևորգ Մարգաբետունուն անցյալի դեպքերի մասին պատմելիս խոսում էր անցյալով՝ գործածելով անցյալ կատարյալի ձևերը, բայց իր համար ամենացավալի կետերն ընդգծելու համար նա անցյալը ներկայացնում է ներկայով՝ գործածելով անկատար ներկայի ձևերը. «Մինչ այս, մինչ այն, Աբաս արքաեղբոր և նրա աներոջ դավադրությունը երևան *եկավ*, որից ստիպված, ինչպես գիտես, թագավորը *քաշվեցավ* Ուտիք: Եվ, ահա՛, մի դժբախտ օր նամակ **եմ ստանում** իմ դստեր դայակից, թե թագուհին մերձիմահ հիվանդ է Տավուշ բերդում և կամենում է ինձ տեսնել: Իսկույն ևեթ **չտապում եմ** Տավուշ: **Տեսնում եմ** աղջիկս հոգեկան ծանր տագնապի մեջ: **Հարցնում եմ** հիվանդության պատճառը, և նա տանջվելով դառնապես արտասվելով **պատմում է** ինձ յուր դժբախտությունը...» (Մ 83):

Սահմանական անկատար ներկայով հաճախ արտահայտվում են ապագայում հաստատ կատարվելիք գործողությունները, ինչպես՝ «Պատրաստե՛լ տուր նժույզները, ճանապարհի պաշար և համհարգը. վաղը չէ մյուս օրը **ճանապարհվում ենք** Պարսկաստան» (ԴԴ 361), «Դո՛ւրս կորի իսկույն և պատրաստվի՛ր, վաղը **գնում ենք** Պարսկաստան» (ԴԴ 361): Նշված նշանակությունները դիտվում են որպես լրացուցիչ նշանակություններ և հանդես են գալիս ներակայորեն, քանի որ չունեն իրենց հատուկ,

անմիջական ձևային արտահայտությունը: Բայց մյուս կողմից, ինչպես նշում է Ա. Բոնդարկոն, ամենալայն ընդգրկմամբ ներակա արտահայտությունը ևս կարելի է ընդունել որպես ձևական արտահայտություն, քանի որ ներակայորեն արտահայտված նշանակությունը բխում է նրանից, ինչն արտահայտված է արտակայորեն, և այդ պատճառով էլ պարփակում է ձևական արտահայտության լայն հասկացություն (Бондарко 152): Բերված օրինակներում սահմանական ներկան հանդես է գալիս որպես անցյալում կատարված և ապագայում կատարվելիք գործողությունների ներակա արտահայտման ձևաբանական-շարահյուսական միջոց, քանի որ լինելով ձևաբանական միավոր՝ սահմանական ներկան այդ նշանակությունները ձեռք է բերում շարահյուսական կիրառության մեջ:

Պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ մի քերականությամբ հանդես է գալիս մյուսի նշանակությամբ, չի կարելի ասել, թե նրա համար ծագում է նոր նշանակություն, քանի որ պետք է պահպանվի քերականական կարգերի իմաստային հակադրության սկզբունքը, իսկ ասել, թե օրինակ՝ ներկա ժամանակի նշանակություններից մեկը համընկնում է անցյալ ժամանակի, իսկ մյուսը՝ ապագա ժամանակի հիմնական նշանակության հետ, քանդում է ամբողջ համակարգը («Имплицитность в языке и речи» 23):

Այս առնչությամբ ռուս լեզվաբան Օ. Լարինան անցյալում կատարված և ապագայում կատարվելիք գործողությունների արտահայտման ներակա միջոցները բաժանում է 3 խմբի՝

1. **ձևաբանական-շարահյուսական.** այս խմբում ներառված կառույցների ժամանակային բնույթը կարելի է որոշել՝ հաշվի առնելով բայական կերպաժամանակային ձևերի ձևաբանական առանձնահատկությունները,

2. **շարահյուսական-իմաստային.** ժամանակի անուղղակի նշումը իրացվում է նախադասության մեջ մտնող առանձին միավորների՝ գործողության տեղի, գործողությունը կատարողի դեմքի, տարբեր հանգամանքների, դիպվածային նշանակությամբ կառույցների և սեղմված կառույցների միջոցով,

3. **համատեքստային.** համընթաց գործողություններ, կրկնաբանական անտիցենդենտ (анафорический антецендент), լայն կոնտեքստ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դրսևորումները (Ларина 214-220):

Իսկ Ա. Ռակուշինան, ընդգծելով, որ միայն քերականությունը ի վիճակի չէ հաղորդելու ժամանակային հարաբերությունների ողջ գամման, առանձնացնում է անցյալի ժամանակային իմաստի դրսևորման միջոցներ գեղարվեստական-գրքային բառապաշարում՝ հնաբառեր, պատմաբառեր, բանաստեղծական բառեր, օտարաբանություններ, նորաբանություններ, տերմիններ ու գրքային բառեր (Ракушина 71-82):

2. Եղանակային իմաստի ներակայում: Հայտնի է, որ եղանակի քերականական կարգի հիմքում ընկած է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, ըստ այդմ գործողությունը կարող է ներկայացվել որպես իրական, ստույգ կատարվող, ցանկալի, հրաման և այլն, որոնց հիման վրա էլ առանձնացվում են բայի եղանակները: Բազմազան են հրամանի արտահայտման ձևերը: Հրամանի արտահայտումը հրամայական եղանակի գլխավոր գործառնություն է, սակայն հրաման կարող է արտահայտվել նաև եղանակային այլ ձևերի միջոցով, օրինակ՝ սահմանական եղանակի անկատար ներկայի 2-րդ դեմքով. «Բոլոր տվյալները **հավաքում ես** (= **հավաքի՛ր**) և **փոխանցում** (= **փոխանցի՛ր**) համապատասխան բաժիններ», կամ ենթադրական ապառնիի 2-րդ դեմքով. «Առավոտը ողջ ավանը **կհավաքես** (= **հավաքի՛ր**) ամրոցի հրապարակ, դատաստան պիտի տեսնել փախստական ռամիկի հետ» (Սև 38) (հրամանի արտահայտման այլ ձևերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ավետիսյան և ուրիշներ 248-249):

Ի տարբերություն հրամայական եղանակի, որի դեպքում հրամանը կտրուկ է արտահայտվում, անկատար ներկայով ու ենթադրական եղանակով հրամանն ավելի մեղմ է ներկայացվում, այսինքն՝ վերջին դեպքում բացի նրանից, որ ամկա է եղանակային իմաստի ներակայում, արտահայտվում է նաև լրացուցիչ՝ մեղմության նշանակություն:

Կամ սահմանական եղանակի անկատար ներկային և անցյալին ներհատուկ նշանակություններից է իբրև կարգ, սովորույթ կրկնվող գործողություններ արտահայտելը: Երբեմն այդ իմաստը կարող է արտահայտվել ենթադրական անցյալի ձևերով, որը տվյալ եղանակի հասկացակարգային նշանակությունը չէ, օրինակ՝ «Իր սեղանի վրա ամեն օր **կվայելեր** (= **վայելում էր**) սիրած բուրայից կերակուրները, անհրաժեշտաբար **կպարպեր** (= **պարպում էր**) իր հայրենի Կո կանտոնի գինին, **կըմպեր** (= **ընպում էր**) մի բաժակ սուրճ, **կմանրեր** (= **մանրում էր**) մի քանի բիսկվիտ ու **կզնար** (= **զնում էր**) լճափի զարեջրատունը, **կնստեր** (= **նստում էր**) նրա դռան կիսավրանի տակ, **կվառեր** (= **վառում էր**) մի սիգար...» (ԴԴ^Ե 29):

3. Անդեմ ձևերի կիրառությունը դիմավոր ձևերի նշանակությամբ: Խոսեցինք հրամայական եղանակի նշանակությունը ներակայորեն արտահայտող դիմավոր ձևերի մասին, սակայն առանձին դեպքերում գործողության կատարման հրամանը կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայով (բայական անդեմ՝ Նախադասություններում): Այսինքն՝ անդեմ բայածևը հանդես է գալիս դիմավոր բայի նշանակությամբ՝ արտահայտելով եզակի կամ հոգնակի 2-րդ դեմք. հմմտ. «Լռե՛լ» և «Լռի՛ր // լռե՛ք», «Կատարե՛լ հրամանը» և «Կատարի՛ր // կատարե՛ք հրամանը» և այլն:

4. Դիմային իմաստի ներակայում: Ըստ հասկացակարգային նշանակության՝ 1-ին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը (խոսողները), 2-րդ դեմքը՝ խոսակիցը (խոսակիցները), 3-րդ դեմքը՝ որևէ երրորդ անձ (անձեր): Սակայն կան դեպքեր, երբ այս կամ այն դեմքը արտահայտում է իրեն ոչ հատուկ իմաստներ: Սրա տիպիկ օրինակը հարգական հոգնակին է՝ **Դուք**-ը, երբ հոգնակի թվով արտահայտվում է եզակի թվի նշանակություն: Դիմային իմաստի ներակայումն օգտագործվում է որպես յուրօրինակ ոճական հնարք: Այն դրսևորվում է բոլոր գործառական ոճերում, բայց ոչ հավասարապես: Այսպես՝ գիտական, պաշտոնական ոճերում պայմանավորված դրանց ճշգրտության, միանշանակության պահանջով՝ այս հնարքը սահմանափակ դրսևորում ունի. մեծ մասամբ դրսևորվում է հեղինակային **մենք**-ը, երբ հոգնակի 1-ին դեմքը կիրառվում է եզակի 1-ին դեմքի նշանակությամբ, օրինակ՝ «Մեր նպատակն է ուսումնասիրել ներակայման առանձնահատկություններն ու դրսևորումները լեզվի բոլոր մակարդակներում», «Պահանջում ենք հաստատել ծրագիրը» և այլն:

Դիմային ներակայման դրսևորումները բազմազան են առօրյա-խոսակցական ու գեղարվեստական ոճերում: Գեղարվեստական խոսքում դա պայմանավորված է գեղարվեստական ստեղծագործության այն առանձնահատկությամբ, որ միասնաբար հանդես են գալիս հեղինակային խոսքն ու կերպարների ուղղակի խոսքը, և հեղինակը տիպականացման, միջավայրի պատկերը ստեղծելու համար իր կերպարներին խոսեցնում է իրենց շրջանակին հատուկ, առօրյա-խոսակցական լեզվով: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել դիմային փոխարինումների հետևյալ դեպքերը.

ա) Եզակի 3-րդ դեմքը 1-ին դեմքի նշանակությամբ. սա այն դեպքերում է, երբ խոսողն իր մասին խոսում է 3-րդ դեմքով, օրինակ՝ «Օ՛, թու՛յլ տուր, որ միայն ես ծառայեմ քեզ, իմ քացր, իմ անման թագուհի. մի՞թե **Սեդան պառավել է** այնքան, որ այլևս ոչ մի բանի պիտանի լինել չի կարող» (Մ 9. խոսողը Սեդան է), «Սևադան թող ներե, նրա որդիքը թող ներեն, բոլոր աշխարհը ներե, **Ամրամ սեպուհը չի ներիլ**» (Մ 110. Ցիլկ Ամրամն ինքն է խոսում իր մասին):

բ) Եզակի 3-րդ դեմքը եզակի 2-րդ դեմքի նշանակությամբ, օրինակ՝ «- Եկա հիշեցնելու, որ ցուրտ է, և **թագուհին կարող է մրսել**»:

- Այդ ես ինքս կարող էի իմանալ,- նկատեց թագուհին» (Մ 7):

Սեդան իրենց գրույցի ժամանակ ուղղակիորեն թագուհուն **դու**-ով դիմելու փոխարեն (դու կարող ես մրսել) նրան դիմում է **3-րդ** դեմքով:

գ) *Եզակի 2-րդ դեմքը ընդհանրական նշանակությամբ*. Եզակի 2-րդ դեմքով կարող են արտահայտվել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են ոչ միայն դիմացինին, խոսակցին, այլև ընդհանրապես բոլոր մարդկանց: Այս դեպքում առկա է միաժամանակ երկու քերականական կարգերի (թվի և դեմքի) հասկացակարգային նշանակությունների ներակայում, քանի որ մի կողմից՝ Եզակի թվով արտահայտվում է հոգնակի թվի իմաստ, մյուս կողմից՝ 2-րդ դեմքով՝ առհասարակ բոլոր 3 դեմքերին վերաբերող նշանակություններ, օրինակ՝ «Կան իրավիճակներ, երբ **մտածում ես, մտածում** ու ելք **չես գտնում»** կամ «Բայց ինչպե՞ս **չվրդովվես**, երբ **տեսնում ես**, թե նա այդ բոլոր ոճիրները գործելուց հետո դեռ ապագա սերունդը խաբելու համար էլ հիշատակարաններ է կառուցում» (Մ 28): Պատահական չէ, որ նման կառույց ունեցող նախադասությունները կոչվում են **ընդհանրական դիմավոր** (Պապոյան, Բաղդկյան 85): Կարծես նախադասության անվանումն իսկ խոսում է նրանում առկա դիմային իմաստի ներակայման մասին: Այս երևույթը մեծ մասամբ դրսևորվում է առածներում, որոնք խրատական բնույթ ունեն, և խրատներն ուղղված են բոլորին, ինչպես՝ «Հազար **չափի՛ր**, մեկ **կտորի՛ր**», «**Կե՛ր** փորձած թանը, **մի՛ կեր** անփորձ մածունը» և այլն: Նույնպիսի ներիմաստ կարող է արտահայտվել նաև 3-րդ դեմքով, օրինակ՝ «Մի ձեռքով երկու ձմերուկ **չեն բռնի**»:

դ) *Հոգնակի 1-ին դեմքը 2-րդ դեմքի նշանակությամբ*. այս կիրառությունը պայմանավորված է հիմնականում հաղորդակցության շրջանակով և շփումն անմիջական դարձնելու ձգտումով: Այսպես, օրինակ, ուսուցիչը հաճախ աշակերտներին դիմում է այսպես. «Սովորե՛լ ենք դասը», այսինքն՝ հարցը ձևակերպում է 1-ին դեմքով, բայց իրականում այն ուղղված է միայն աշակերտներին, հմմտ.՝ «Սովորե՛լ եք դասը»: Կամ բժիշկը հիվանդին այցելելիս հարցնում է. «Ինչպե՞ս ենք մեզ զգում», սակայն այս արտաքին ձևակերպման տակ թաքնված է միայն հիվանդին ուղղված հարց, հմմտ.՝ «Ինչպե՞ս եք Ձեզ զգում» և այլն:

Վերևում խոսեցինք հեղինակային **մենք**-ի մասին: Հավելենք, որ հոգնակի 1-ին դեմքի կիրառությունը Եզակի 1-ին դեմքով նաև բարբառային երևույթ է և լայն տարածում ունի առանձին բարբառներում:

5. Թվային իմաստի ներակայում: Թվի քերականական կարգը ներկայանում է Եզակի ու հոգնակի թվերի հակադրությամբ: Եզակի թիվը ցույց է տալիս մեկ, Եզակի առարկա, հոգնակի թիվը՝ միևնույն տեսակի մեկից ավելի առարկաներ: Առանձին դեպքերում, սակայն, այս սահմանազատումը խախտվում է. մեկը հանդես է գալիս մյուսի նշանակությամբ: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ Եզակի թվով դրված գոյականն արտահայտում է ընհանրական նշանակություն, օրինակ՝ «**Սկյուռը** կյանքի մեծ մասն անցկացնում է ծառերի վրա, սնվում է փշատերև բույսերի սերմերով, ընկույզներով», «Գոյականը ցույց է տալիս առարկա». խոսքը ոչ թե *մեկ սկյուռի, գոյականի* մասին ընդհանրապես: Իհարկե, այս երևույթը դրսևորվում է բոլոր գործառական ոճերում, բայց և այնպես այն առավել տիպական է գիտական ոճին: Եվ դա այն պատճառով, որ գիտական ոճում գոյականները սովորաբար հանդես են գալիս ընդհանրական նշանակությամբ՝ ցույց տալով ոչ թե կոնկրետ առարկա, այլ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես (Ավետիսյան և ուրիշներ 297):

Որոշակի կառույցներում շաղկապական արժեքով գործածվելիս հանդես գալով Եզակի թվով՝ հոգնակի թվի իմաստ է արտահայտում **որ** հարաբերական դերանունը, օրինակ՝ «Երբ մտան առաջին պատահած փողոցը՝ Արշակը նկատեց դիակներ, **որ** (= **որոնք**) ընկած էին գետնին՝ փոշիների մեջ, տների առաջ, պատերի տակ» (ՍՉ 389):

6. Հոլովական իմաստի ներակայում: Սա հիմնականում հանդիպում է առօրյա-խոսակցական լեզվում պայմանավորված խոսողի՝ արագ, հնարավորինս սեղմ տեղեկատվությունը հաղորդելու ձգտումով:

Այսպես՝ հաճախ «Որտե՞ղ ես» հարցին պատասխանում ենք՝ «**Քաղաք** եմ», «**Տուն** եմ», որոնք նշանակում են՝ «**Քաղաքում** եմ», «**Տան** եմ», կամ բերենք օրինակներ գեղարվեստական գրականությունից. «- Իսկ հոգևոր տերը ժամանե՞լ է,- հարցրեց նա հանգիստ:

- **Էջմիածին** (= **Էջմիածնում**) է, հոգևոր ժողովում,- ասաց բերդապետը...» (ԴԴ 83), «Թագավորը յուր իշխաններից թողված, ապստամբներից հալածված՝ նստած է **Կաթավաքար** (= **Կաթավաքարում**)» (Մ 161), այսինքն՝ 1-ին, 3-րդ և 4-րդ դեպքերում ներակայված է ներգոյական հոլովի, 2-րդ դեպքում սեռական-տրական հոլովի իմաստը: Հոլովական իմաստի ներակայումը չհասկանալու դեպքում բերված նախադասությունները պարզապես անհեթեթություն կլինեին:

Կամ հոլովական իմաստի ներակայման վառ դրսևորում է **բացարձակ անորոշը** կամ **բացարձակ աներևույթը**, երբ անորոշ դերբայի ուղղական հոլովածը կիրառվում է սեռական-տրականի և բացառականի փոխարեն՝ փաստորեն ներակայելով վերջիններիս իմաստները, օրինակ՝ «Խուսափում էր հանդիպել», «Դադարել է գոյություն ունենալ», «Պատրաստվում է գնալ»՝ փոխանակ «Խուսափում էր հանդիպելուց», «Դադարել է գոյություն ունենալուց», «Պատրաստվում է գնալու»: Սա առաջին հերթին խոսակցական լեզվին բնորոշ երևույթ է, բայց և այնպես բացարձակ աներևույթն աստիճանաբար տարածվում և լայն կիրառություն է գտնում նաև գրական լեզվում:

Բացի այն դեպքերից, երբ ձևաբանական մի կարգը հանդես է գալիս մեկ այլ կարգի նշանակությամբ, լեզվաբանության մեջ առանձնացվում են ձևաբանական մակարդակում ներակա տեղեկատվության արտահայտման ևս երկու դեպք՝ որևէ քերականական կարգ արտահայտվում է գրոյական ձևով և տվյալ քերականական կարգի միջոցով արտահայտվում են լրացուցիչ նրբերանգներ («Имплицитность в языке и речи» 15): Քերականական իմաստները կարող են արտահայտվել հատուկ մասնիկներով կամ առանց մասնիկների՝ այսպես կոչված **զրո** կամ **բացասական ձևով**: Այսպես, օրինակ, եզակի թվի իմաստն արտահայտվում է առանց որևէ մասնիկի (տուն, այգի), իսկ հոգևակի թվի իմաստը՝ սովորաբար **եր** և **ներ** մասնիկներով (տներ, այգիներ): Կամ որոշյալ առումն արտահայտվում է **ը** և **ն** հոդերով (տունը, այգին), իսկ անորոշ առումը՝ առանց հոդերի (տուն, այգի): Այսինքն՝ նման դեպքերում մասնիկի բացակայությունը ևս արտահայտության մի յուրահատուկ ձև է և հակադրվում է մասնիկներով արտահայտվող ձևերին (Ասատրյան 12): Հետևաբար նման դեպքերում գրոյական ձևը ներակա հաղորդման դեպքերի շարքին չի դասվում: Ռուսերենում գրոյական ձևը ներիմաստի արտահայտման դեպքերին դասելու համար հիմք են ընդունում ստորոգման արտահայտման հատուկ ձևի բացակայությունը (օրինակ՝ он красивый, он дурак) («Имплицитность в языке и речи» 16):

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ պարունակվող նշանակությունից բացի ծագում են լրացուցիչ նշանակություններ, առավել հստակ կարելի է ներկայացնել անցյալ կատարյալի ու վաղակատարի հակադրությամբ: Երկուսն էլ արտահայտում են կատարված, ավարտված գործողություն այն տարբերությամբ, որ վաղակատարի դեպքում արտահայտվում է հետևանքի հարատևության լրացուցիչ նշանակություն:

Կամ կարելի է նշել պայմանականության ներակա իմաստի արտահայտումը բայի ենթադրական, հարկադրական եղանակների անցյալի ու սահմանական եղանակի ապակատար անցյալ ժամանակաձևերում (Կզնայինք արշավի // Պիտի գնայինք // Գնալու էինք արշավի, *եթե անձրև չգար*) (Աբրահամյան 9: Մասնավորապես պայմանական ասույթներում ներակայման մանրամասն քննությունը տե՛ս Բրուտյան):

Այսպիսով՝ լեզվի ձևաբանական մակարդակի սպառիչ ուսումնասիրության համար կարևոր է և՛ արտակայորեն, և՛ ներակայորեն արտահայտված կարգերի

ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուր ձևաբանական միավոր ունի իրեն հատուկ նշանակություն, սակայն առանձին դեպքերում իրացվելով խոսքում կարող է արտահայտել նաև այլ նշանակություններ:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան, Սերգեյ. «Ներակայումը և հայոց լեզվի զարգացման մի քանի հարցեր»։ «Լրաբեր» հաս. գիտ., № 1, Եր., 2002:
2. Ասատրյան, Մանվել. *Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն*, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2004:
3. Ավետիսյան, Յուրի և ուրիշներ. *Հայոց լեզու և խոսքի մշակույթ*, Եր., ԵՊՀ հրատ., 2016:
4. Բրուտյան, Լիլիթ. *Ներակայման տեսության հիմունքները*, Եր., «Հայաստան» հրատ., 2002:
5. Պապոյան, Արտաշես և Բադիկյան, Խաչիկ. *Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2003:
6. «Имплицитность в языке и речи». отв. ред. Е. Г. Борисева, Ю. С. Мартемьянов, М.: Языки русской культуры, 1999.
7. Барышева, Алёна. «Имплицитность как свойства языковых единиц и категории». *Филологические науки. Вопросы теории и практики*, № 4 (34), 2014, с. 38-40, https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_4-2_08.pdf.
8. Бондарко, Александр. *Грамматическое значение и смысл*. Л.: Наука, 1978.
9. Кацнельсон, Соломон. *Типология языка и речевое мышление*. Л.: Наука, 1972.
10. Ларина, Ольга. «Средства имплицитной темпоральной локализации будущего действия: возможная классификация». *Вестник Волгу, Серия 2, Языкознание*, т. 15, № 4, 2016, с. 214-220, <https://cyberleninka.ru/article/n/sredstva-implitsitnoy-temporalnoy-lokalizatsii-buduschego-deystviya-vozmozhnaya-klassifikatsiya/viewer>.
11. Ракушина, Альфия. *Литературно – книжная лексика как средство имплицитной передачи темпоральной локализации в прошлом в произведениях художественной литературы* / Ракушина А., Ивушкина Т., Научный диалог, № 9 (57), 2016, с. 71-82, <https://cyberleninka.ru/article/n/literaturno-knizhnaya-leksika-kak-sredstvo-implitsitnoy-peredachi-temporalnoy-lokalizatsii-v-proshlom-v-proizvedeniyah/viewer>.

Համառոտագրություններ

ԴԴ – Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Եր., «Լույս» հրատ., 1987:

ԴԴ^Ե – Դ. Դեմիրճյան, Երկեր երկու գրքով, Գիրք առաջին: Պատմվածքներ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977:

Մ – Մուրացյան, Գևորգ Մարզպետունի, Եր., «Լույս» հրատ., 1988:

Ս2 – Սո. Չորյան, Հայոց բերդը, Եր., Հայպետհրատ, 1959:

ՍԽ – Ս. Խանզադյան, Միսիթար Սպարապետ, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988:

Works Cited

1. Abrahamyan Sergey, Nerakayumy' ev hayoc lezvi zargacman mi qani harcer, «Lraber» has. git., № 1, Er., [Implicitness and Several Issues of the Development of the Armenian language, "Lraber", social sciences, N1, Yerevan] 2002.
2. Asatryan Manvel, Jhamanakacic hayoc lezu. D'evabanut'yun, Er., Erevani hamalsarani hrat., [Modern Armenian. Morphology, Yerevan Publishing House] 2004.

3. Avetisyan Yuri ev urishner, Hayoc lezu ev xosqi mshakuyt', Er., EPH hrat., [Armenian Language and Word Culture, Yerevan, YSU publishing] 2016.
4. Brutyan Lilit', Nerakayman tesut'yan himunqner'y', Er., «Hayastan» hrat., [Fundamentals of Implicitness Theory, Yerevan, Hayastan Publishing House] 2002.
5. Papoyan Artashes, Badikyan Xachik, Jhamanakacic hayoc lezvi sharahyusut'yun, Er., Erevani hamalsarani hrat., [Syntax of the modern Armenian language, Yerevan, YSU publishing] 2003.
6. «Implicitnost' v jazyke i rechi», otv. red. E. G. Boriseva, Ju. S. Martem'janov, M.: Jazyki russkoj kul'tury, ["Implicitness in language and Speech", ed. by E. G. Boriseva, Yu. S. Martemyanov, M.: Languages of Russian culture] 1999.
7. Barysheva Aljona. Implicitnost' kak svojstva jazykovyh edinic i kategorii. Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki, № 4 (34), 2014, s. 38-40, [Implicitness as Properties of Language Units and Categories. Philological sciences. Questions of Theory and Practice, No. 4 (34), 2014, pp. 38-40] https://www.gramota.net/articles/issn_1997-2911_2014_4-2_08.pdf.
8. Bondarko Aleksandr. Grammaticheskoe znachenie i smysl. L.: Nauka, [Grammatical Meaning and Sense. L.: Nauka] 1978.
9. Kacnel'son Solomon. Tipologija jazyka i rechevoe myshlenie. L.: Nauka, [Typology of Language and Speech Thinking. L.: Nauka] 1972.
10. Larina Ol'ga. Sredstva implicitnoj temporal'noj lokalizacii budushhego destvija: vozmozhnaja klassifikacija. Vestnik Volgu, Serija 2, Jazykoznanie, t. 15, № 4, 2016, s. 214-220, [Means of Implicit Temporal Localization of the Future Action: A Possible Classification. Bulletin of the Volga State University, Series 2, Linguistics, vol. 15, No. 4, 2016, pp. 214-220] <https://cyberleninka.ru/article/n/sredstva-implitsitnoy-temporalnoy-lokalizatsii-buduschego-deystviya-vozmozhnaya-klassifikatsiya/viewer>.
11. Rakushina Al'fija. Literaturno – knizhnaja leksika kak sredstvo implicitnoj peredachi temporal'noj lokalizacii v proshlom v proizvedenijah hudozhestvennoj literatury / Rakushina A., Ivushkina T., Nauchnyj dialog, № 9 (57), 2016, s. 71-82, [Literary And Book Vocabulary as a Means of Implicit Transmission of Temporal Localization in the Past in Works of Fiction / Rakushina A., Ivushkina T., Scientific Dialogue, No. 9 (57), 2016, pp. 71-82] <https://cyberleninka.ru/article/n/literaturno-knizhnaya-leksika-kak-sredstvo-implitsitnoy-peredachi-temporalnoy-lokalizatsii-v-proshlom-v-proizvedeniyah/viewer>.

IMPLICITNESS AT THE MORPHOLOGICAL LEVEL OF MODERN ARMENIAN

MIRANUSH KESOYAN

Yerevan State University,

Chair of the Armenian Language, Ph.D. Student,

Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to make sure that the study of implicated grammatical categories has a great importance for the complete study of the morphological level of a language. Our task is to reveal and to introduce the manifestations of the implicitness at the morphological level of Modern Armenian.

In the course of the study analytical and comparative methods have been applied.

Every single morphological unit has its particular meaning. However, when applied in speech, it can carry other meanings as well. In other words, a particular morphological unit is being used with the meaning of another one, which is considered to be implicated in this case. So, the following forms of implicitness on morphological level can be enumerated – 1) implicitness of time meaning, 2) implicitness of mood meaning, 3) use of impersonal form with a meaning of personal, 4) implicitness of personal meaning, 5) implicitness of number meaning, 6) implicitness of case meaning.

In some cases, alongside with the main meaning, additional meanings can also be expressed (e. g. meaning of consequence eternity in case of past perfect tense).

Keywords: *implicitness, “hidden” grammar, implicitness of meanings of time, mood, person, number, case, historical present, perfect indefinite, zero or negative forms.*

ИМПЛИЦИТНОСТЬ НА МОРФОЛОГИЧЕСКОМ УРОВНЕ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

МИРАНУՍ ԿԵՏՅԱՆ

*аспирант кафедры армянского языка ЕГУ
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – обосновать, что для полноценного изучения морфологического уровня языка важное значение имеет рассмотрение имплицитно выраженных категорий. Наша задача – выявить и представить проявления имплицитного на морфологическом уровне современного армянского языка.

В процессе исследования были применены аналитические и сравнительные методы.

Каждая морфологическая единица имеет свое собственное значение, но в отдельных случаях, выражаясь в речи, она может приобретать и другие значения. Иначе говоря, одна морфологическая единица используется в значении другой, которая в данном случае рассматривается как имплицитно выраженная. Таким образом, на морфологическом уровне можно разделить следующие проявления имплицитности: 1) имплицитность временного значения, 2) имплицитность наклонения, 3) использование безличной формы в значении личной, 4) имплицитность личного значения, 5) имплицитность значения числа, 6) имплицитность значения падежа.

В отдельных случаях, кроме основного, могут выражаться также дополнительные значения (например значение долговечности последствия в давно прошедшем времени).

Ключевые слова: *имплицитность, «скрытая» грамматика, имплицитность значений времени, наклонения, лица, числа, падежа, исторический настоящий, абсолютная неопределённая, нулевая или отрицательная форма.*